Ցեղասպանագիտական հանդես 11 (1), 2023
https://doi.org/10.51442/jgs.0038

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ, ԹԵ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ԲԺԻՇԿ ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆԻ ՕՐԱԳԻՐԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ (խորհրդածություններ գրախոսականների և օրագրի գրականագիտական արժեքների շուրջ)

Դորա Գ. Սաքայան
ՄաքԳիլի համալսարան, Կանադա

Հոդվածում հեղինակը, որ բժիշկ Կարապետ Խաչերյանի՝ Զմյուռնիայի աղետի մասին մեզ թողած օրագրի հայտնաբերողն է, հրատարակիչն ու տարածողը, դիտարկում է այդ գրվածքի շուրջ առկա գնահատականները: Երեք տասնամյակի ընթացքում օրագիրը երկար ճանապարհ է անցել: Երկու անգամ հայերեն (բնագիր արևմտահայերեն և արևելահայերեն) հրատարակվելուց հետո օրագիրը մինչև օրս աշխարհին ներկայացել է յոթ լեզուներով, որոնց շնորհիվ այն Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված աղբյուրների մեջ հայտնի է դարձել որպես ամենից շատ թարգմանված գործերից մեկը:

Հոդվածում բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի մասին կարծիքներ են մեջբերվում փորձագետների գրախոսականներից, նամակներից և ելույթներից: Դրանց մեջ գլխավորապես նշվում է օրագրի բացառիկ արժեքը՝ որպես պատմական փաստաթուղթ և սկզբնաղբյուր: Հաճախ է շեշտվել նաև օրագրի գրական արժեքը, սակայն այդ տեսանկյունից երբեք չի վերլուծվել: Նման փորձ՝ օրագրից ընտրած երկու հատվածի հիման վրա, առաջին անգամ կատարում է հոդվածի հեղինակը՝ ի հայտ բերելով գրող Կարապետ Խաչերյանի հատուկ կարողությունը՝ կիրառելու գրական հնարքներ և վարպետորեն օգտագործելու հայոց լեզվի հարուստ բառապաշարն ու բառաձևերը:

Բանալի բառեր՝ օրագիր, բնագիր, ձեռագիր, թարգմանություն, վավերագրություն, սկզբնաղբյուր, փաստաթուղթ, գրական գործ, գրականագիտական վերլուծություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 15.01.2023: Ընդունվել է տպագրության՝ 02.05.2023:
The article was submitted on 15.01.2023 and accepted for publication on 02.05.2023.
Статья поступила 15.01.2023 и была принята к публикации 02.05.2023.

Ինչպես հղել՝ Դորա Գ. Սաքայան, «Փաստաթուղթ, թե գրական գործ. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը Զմյուռնիայի աղետի մասին (խորհրդածություններ գրախոսականների և օրագրի գրականագիտական արժեքների շուրջ)», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 35-49:
How to cite: Dora G. Sakayan, "Document or Literary Work? Doctor Karapet Hatcherian's Diary about the Smyrna Disaster (Reflections on Reviews and Literary Values of the Diary)," *Ts'eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 35-49.
Как ссылаться: Дора Г. Сакаян "Документ или литературное произведение? Дневник доктора Карапета Хачеряна о катастрофе в Смирне (размышления об отзывах и о литературных ценностях дневника)," *Цехаспанагитакан андес* 11, no. 1 (2023), 35-49.

Նախաբան

Զմյուռնիայի աղետի 100-ամյա տարելիցի օրերին հաճախ է հիշատակվում մեծ հորս՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» վերնագրով օրագիրը, որն այժմ նույնպես 100 տարվա պատմություն ունի: Որպես այդ օրագրի հայտնաբերման, հրատարակման և տարածման պատասխանատու անձ՝ պարտքս եմ համարում, նախքան բուն նյութին անցնելը, մի փոքրիկ հաշվետվություն տալ այն մասին, թե ինչ ճանապարհ է անցել այդ կարևոր ձեռագիրը իմ ձեռքն անցնելուց հետո:

Օրագրի գոյության մասին տեղեկացել եմ բավական ուշ՝ 1992 թ., իսկ ձեռագրի պատճենը հասել է ինձ մեկ տարի անց, այսինքն՝ 30 տարի առաջ[1]: Գնահատելով օրագրի պատմական արժեքը և գիտակցելով, որ այն միայն մեր ընտանիքին չի պատկանում՝ ես անմիջապես ձեռնամուխ եղա ձեռագրի ամբողջական վերծանման և արևմտահայերեն բնագրի հրատարակման գործին: Պատրաստեցի վերլուծական մի ներածություն, ինչպես նաև Կարապետ Խաչերյանի կենսագրությունը՝ օգտվելով նրա ծննդավայր Պարտիզակի մասին առկա հայրենական գրականությունից[2]:

Օրագիրը լույս տեսավ բազմաթիվ լեզուներով՝ արևմտահայերեն ու արևելահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հունարեն, թուրքերեն և ռուսերեն, գերմաներեն[3]: Այդկերպ այն դարձավ Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական գործերի մեջ ամենից շատ թարգմանված գրքերից մեկը:

Օրագրի անգլերեն տարբերակն աչքի ընկավ նաև գրախոսականների ամենամեծ թվով, որոնք, սկսած 1997 թվականից, իրար հետևից լույս տեսան կանադահայ և ամերիկահայ լրատվամիջոցներում: Ամենից ողջունելին, սակայն, մի գրախոսական էր, որ տպված էր Մոնրեալի «The Gazette» անգլալեզու օրաթերթում: Այնտեղ՝ «Գրքեր» բաժնում (Section “Books”), մի ծավալուն հոդված էր տեղադրել ու բավականին «հանդուգն» խոսքեր էր ասում հայտնի կանադացի գրող և լրագրող Էլեն Քելման Նեյվսը (Elaine Kalman Naves): Երջանիկ պատահականությամբ այդ հրաշալի հոդվածը լույս տեսավ 1997 թ. հոկտեմբերի 4-ին՝ «Chapters» գրախանութում տեղի ունեցած աղմկալի շնորհանդեսին հաջորդող օրը: Ահա դրա վերնագիրը՝ «Մեծարանք մեծ հայրիկին՝ գիրքը հավերժության հանձնելու միտումով… Ջարդերի ականատեսի վկայություններն արձանագրված»: Ստորև բերում եմ այդ գրախոսությունից երկու կարճ պարբերություն:

> «Զմյուռնիայի ջարդերը տեղի ունեցան 1915 թ. մեծ ողբերգությունից յոթ տարի անց, երբ մեկուկես միլիոնից ավելի հայեր կոտորվեցին

1 Օրագրի՝ ձեռքս անցնելու հանգամանքներն ավելի մանրամասնորեն ներկայացրել եմ և՛ հայերեն, և՛ այլալեզու հրատարակությունների ներածությունների մեջ:

2 Ասատուր Մակարեան, *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու* (Սելանիկ, տպ. Հորիզոն օրաթերթի, 1929), Գրիգոր Մխալեան, *Պարտիզակն ու պարտիզակցին* (Գահիրէ, Սահակ-Մեսրոպ, 1938), Յակոբ Տէր-Յակոբեան, *Պարտիզակը խաւտուտիկ* (Փարիզ, Յակոբ Տէր-Հակոբեան, 1960):

3 Հրատարակությունների ցանկը տես. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%B8%D6%80%D5%A1_%D5%8D%D5%A1%D6%84%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6

> կամ սովամահ եղան, մինչ վտարվում էին Թուրքիայից: Այդ երևույթը այժմ դիտվում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Ասում են, որ աշխարհի լռությունն ու անտարբերությունն ի դեմս այս ոճրագործությունների խրախուսել է Ադոլֆ Հիտլերին, երբ վերջինս ծրագրում էր հրեաների հարցի վերջնական լուծումը»:
>
> «Նրա գրքի հզորությունը զսպվածության և պարզության մեջ է: Ինչպես վերապրողների բոլոր վկայությունները, գիրքը մատուցում է հազարավոր չգրված պատմություններ: Հարություն տալով բժիշկ Խաչերյանի օրագրին՝ Սաքայանը պատկերում է ոչ միայն տանջանքի ու կորստի, այլև պայքարի և վերածննդի մի ամբողջ աշխարհ: Նա նաև սիրո տուրք է մատուցում իր պաշտելի պապիկին և իր ժողովրդին»[4]:

Հիշողությանս մեջ անջնջելի է մնացել մի կարևոր հավաքույթ-շնորհանդես, որը տեղի ունեցավ Երևանում Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների շարքում Հայաստանի գրողների տանը: Շնորհանդեսը 2005 թ. ապրիլի 27-ին կազմակերպել էին Հայաստանի գրողների միությունը (ՀԳՄ) և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Հայտնի գերմանացի ցեղասպանագետ Թեսա Հոֆմանի և մեծ թվով հայ գրողների ներկայությամբ առաջին անգամ ներկայացվեցին բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի հրատարակությունները միանգամից երեք լեզվով՝ թուրքերեն, ռուսերեն և արևելահայերեն փոխադրությունը:

Գրողների տանը մեծ նշանակություն տրվեց ներկայացվող թուրքերեն տարբերակին, որը նոր էր լույս տեսել Թուրքիայում և արժանացել հանրության աննախադեպ ընդունելությանը: Դրա մասին ես տեղեկացա մեր հայրենակցից՝ արժանահիշատակ Հրանտ Դինքից, որ մի քանի օր առաջ ժամանել էր Երևան՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային երկօրյա համաժողովին: Ես գիտեի, թե որքան բարձր էր Հրանտ Դինքը գնահատում Կարապետ Խաչերյանի օրագիրը: Մինչ այդ մենք նամակներ էինք գրում իրար, և ես փոստով նրան ուղարկել էի օրագրի առաջին հրատարակությունները: Երբ մենք համաժողովի օրերին հանդիպեցինք, նա շտապեց ինձ աչքալուսանք տալ՝ ասելով. «Ձեր մեծ հոր օրագիրը Թուրքիոյ մէջ տաք հացի պէս կ'երթայ»: Ավա՛ղ, դա մեր առաջին ու վերջին հանդիպումն էր:

***

Հայտնի է, որ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագիրը պատմաբանները և այլ մտավորականներ համարում են կարևոր փաստաթուղթ: Որպես Զմյուռնիայի աղետի վերաբերյալ հավաստի և իր տեսակի մեջ միակ, այսօր օրագիրը Զմյուռնիայի աղետի պատմության համար առաջնային և կարևոր սկզբնաղբյուր

---

4 Տե՛ս Elaine Kalman Naves-ի ամբողջ գրախոսականի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի. Դորա Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, ՀՑԹԻ, 2005), 149-152:

է: Եղել են շատ գրախոսողներ, բայց բնականաբար ես եմ առաջինն այն մանրակրիտ վերլուծել անդրանիկ հրատարակության ներածության մեջ: Ամենուրեք ընթերցողի ուշադրությունը հրավիրել եմ Կարապետ Խաչերյանի արձակ գրվածքի դասական ոճի վրա, որի մեջ գերիշխում է հեղինակի՝ որպես պայծառ մտքի և լայն հորիզոնի տեր մտավորականի ուղղադատությունը և անաչառությունը: Օրագրի դրվագները հակիրճ փաստագրություններ են և հաճախ կարդացվում են որպես բժշկական զեկույցներ կամ օրաթերթի հոդվածներ՝ հավաստիություն ներշնչելով ընթերցողներին: Ականատեսի նրա վկայությունները հաճախ են ներածվում «տեսնում եմ», «նկատում եմ», «լսում եմ» և նման այլ արտահայտություններով:

Գրախոսողները հատկապես գնահատում են օրագրի մեջ բերված տվյալների համընկնումը Զմյուռնիայի աղետի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության և հատկապես Ռենե Պյուոյի[5], Ջորջ Հորթոնի[6] և Մարջորի Հուսեփյանի[7] գործերի հետ: Դեռ ավելին՝ Կարապետ Խաչերյանի օրագրի մեջ այդ հեղինակների գրքերի մեջ բերված տեղեկությունները էլ ավելի են մասնավորվում իրենց անձնանուններով, տեղանուններով և կարևոր դեպքերի ժամանակագրություններով: Այդ իմաստով օրագրի մասին հատուկ գնահատանքով է խոսում Մարջորի Դոբկին Հուսեփյանը իր ծավալուն նամակում, որտեղ նա ինձ մասնավորապես գրում է. «Այս գիրքը անկասկած շատ կարևոր փաստաթուղթ է: Շնորհավորում եմ Ձեզ և ինձ համար պատիվ եմ համարում, որ այժմ Ձեր մեծ հոր օրագրի նման առաջնային աղբյուրը հաստատում է այն ամենը, ինչ ես էի իմ գրքի համար հայթայթել այստեղից այնտեղից: .... Շնորհակալ եմ այն հսկայական աշխատանքի համար, որ ստանձնել եք այս անգին աղբյուրը թարգմանելու, ինչպես նաև մանրակրկիտ կերպով մշակելու ու փաստերով հիմնավորելու ուղղությամբ»[8]:

Իր նամակում Մարջորի Հուսեփյանն ինձ հայտնում է, թե ինչպես է նա ոգևորվել, երբ բժիշկ Խաչերյանի օրագրում գտել է բազմաթիվ ծանոթ անուններ: Իր խոսքերով՝ այնտեղ նրա համար լուսաբանվել են շատ առեղծվածներ: Նշանակալից է, որ, բացի այն, որ նա որոշ անմիջական տեղեկություններ է ստացել իր ազգական Զարեհ Քավեզյանի ու լավ բարեկամներ Նավասարդյան երեք քույրերի մասին, տիկին Հուսեփյանը օրագրի միջոցով իրազեկ է դարձել իր մայրական կողմի մեծ հոր՝ Գրիգոր Աշճյանի մահվան մանրամասներին: Վերջինիս թուրքերը սպանել են այն պահին, երբ փրկարար նավին հասնելու համար մնացել էր մի քանի մետր: Ահա թե ինչ է գրում ինձ Մարջորին. «Ես երբեք մեծ հորս չեմ ճանաչել. ո՛չ էլ ինձ երբևէ, առանց ինքս պրպտելու, որևէ մեկն ասել է, թե ինչ է նրա հետ պատահել, իսկ մայրս դժվարանում

---

5 Տե՛ս René Puaux, *Les derniers jours de Smyrne* (Paris, 1923).

6 Տե՛ս George Horton, *The Blight of Asia. An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; with a True Story of the Burning of Smyrna* (Indianapolis, 1926).

7 Տե՛ս Housepian Dobkin, *Smyrna 1922. The Destruction of a City*.

8 Մարջորի Հուսեփյան-Դոբկինի ինձ ուղղված ամբողջ նամակի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի՝ Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 164–168:

էր ասել, թե ինչպես է եղել իր հոր վախճանը, քանի որ մորս համար շատ դժվար է եղել խոսել հոր կյանքի վերջավորության մասին: ....Երբ Ձեր պապիկի օրագրի էջերում հանդիպեցի մեծ հորս և տեղեկացա, որ նրանք ընկերներ են եղել, մեծ հայրս զարմանալիորեն կարծես ինձ համար վերակենդանացավ»[9]:

Ստորև ներկայացնում եմ հատվածներ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի վերաբերյալ փորձագետների գրախոսականներից, ելույթներից և կամ ինձ ուղղված նամակներից: Դրանք բոլորը վկայում են, որ Խաչերյանի օրագրի վերաբերյալ փորձագետները համակարծիք են. օրագիրն ունի փաստաթղթային արժեք:

Թեսա Հոֆման. «Այս օրագիրն ականատեսի կարևորագույն զեկույց է, և ինչպես ֆրանսիացիներն են ասում, un document humain, այսինքն՝ մարդկային մի վկայություն տասնամյակներ շարունակ անպատիժ մնացած ցեղասպանությունների վերջին փուլի մասին»[10]:

Վերժինե Սվազլյան. «Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը հատուկ փաստագրական-պատմական արժեք ունի, քանի որ այն անգնահատելի պատկերացում է տալիս Զմյուռնիայի աղետի արհավիրքի մասին՝ հենց վերապրողի տեսանկյունից՝ փաստագրված օրը օրին և ժամը ժամին: ....Իմ կարծիքով՝ նրա բանտարկության հինգ օրերի 20-էջանոց նկարագրությունը պատմության համար ամենանշանակալիցն է»[11]:

Վահագն Տատրյան. «Հիացումով հաստատեցի ճշմարտութիւնը նախաբանիդ մէջ արտայայտած այն դատումներուդ, որ մեծ հայրդ ունի «չափի զգացում», եւ որ հոգեկան ծայրահեղօրէն բարդ պայմաններու նկարագրման ժամանակ ալ, գերադրականներն ու չափազանցութիւնները խիստ սակաւ են, ...անոր խօսքը զուսպ է եւ հետեւաբար համոզիչ ու արժանահաւատ: Շատ տեղին ընտրոշումներ: Այս իմաստով օրագիրն ունի թէ՛ գրական և թէ՛ պատմագրական արժէք: Հայերէնի 18-րդ եւ 26-րդ էջերէն անգամ մը ևս կը հաստատուի, որ թուրքերն էին, որ հրկիզեցին Զմիւռնիան»[12]:

Ռիչարդ Հովհաննիսյան. «Դա բացառիկ մի փաստաթուղթ է՝ լի խիստ արժեքավոր տեղեկություններով. դրա արժեքը ավելի է մեծանում նրանով, որ նրա մեջ ողբերգական եղելությունները նկարագրվում են մեղմացնող և նույնիսկ դեպքերի ուժգնությունը նսեմացնող գույներով» [13]:

Արքեպիսկոպոս Յակովոս. «Սա Զմյուռնիայի մասին միակ օրագիրն է, որով դուք՝ հայերդ, կարող եք հպարտանալ, և այժմ [օրագրի հունարեն հրատարակությունից հետո – Դ. Ս.] մենք՝ հույներս էլ կարող ենք Ձեզ միանալ: Դեպքերը վերապրող Խաչերյանը անաչառությամբ, բայց և ցնցող մանրամասներով նկարագրում է այն մեծ

---

9 Նույն տեղում, 168:

10 *Թեսա Հոֆման* (Tessa Hofmann), գերմանացի գիտնական, ցեղասպանագետ, սոցիոլոգ: Հատված 2005 թ. ապրիլի 27-ին՝ Հայաստանի գրողների տանը կայացած շնորհանդեսին իր ունեցած ելույթից:

11 *Վերժինե Սվազլյան*, հայ բանագետ, ցեղասպանագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր:

12 *Վահագն Տատրյան* (Vahagn Dadrian), ամերիկահայ սոցիոլոգ, իրավագետ, պատմաբան, ցեղասպանագետ: Հատված փոստով ինձ առաքած բացիկից, հոկտ. 30, 1997:

13 *Ռիչարդ Հովհաննիսյան* (Richard Hovannisian), ամերիկահայ պատմաբան: Հատված փոստով ինձ առաքած նամակից, հուլիս 15, 1997: Թարգմանությունը՝ անգլերենից:

ողբերգությունը, որ տարիներ անց ուրիշ գրողներ բազմիցս ջանացել են նկարագրել իր իսկական գույներով, բայց չեն կարողացել…»[14]:

Իոաննիս Խասիոտիս. «Անչափ գոհ եմ, որ այժմ իմ մայրենի լեզվով էլ լույս տեսավ այս արժեքավոր և իր տեսակի մեջ միակ պատմական վկայությունը, և սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ որպես հրատարակչի և խմբագրի: Համոզված եմ, որ հույն հասարակությունն ամենուր մեծ ոգևորությամբ է ընդունելու փաստաթղթի արժեք ունեցող և միաժամանակ մեծ հետաքրքրությամբ ընթերցվող այս գիրքը»[15]:

Յուստինի Ֆրանգուլի. «Կ. Խաչերյանի օրագիրը կատարյալ վավերագրություն է այն մասին, թե ինչպես մի քաղաք ենթարկվեց վայրագության, տմարդության և ապա՝ կործանման: Նա [Խաչերյանը – Դ. Ս.] հազվագյուտ մարդկանցից է, որոնց հաջողվել է նախ փրկվել և ապա նկարագրել այն եղերական օրերը, երբ հույներն ու հայերը գերբնական ճիգեր էին գործադրում՝ ազատվելու այդ անիծյալ վայրերից ու ապաստանելու «Ավետյաց երկրում», որը նրանց համար Հունաստանն էր»[16]:

Թեդ Վիտաս. «Նոր էի սկսել Զմյուռնիայի աղետի պատմությանը ծանոթանալ Marjorie Housepian Dobkin-ի գրքից, երբ AHEPA-ի (American Hellenic Educational Progressive Association) միջոցով տեղեկացա նաև Սաքայանի գրքի մասին: Անմիջապես այն ձեռք բերեցի, և երկու գրքերի զուգահեռ ընթերցումն ինձ շատ օգնեց ամբողջացնել Զմյուռնիայի աղետի իրական պատկերը, քանի որ այդ երկու գրքերի մեջ գտա կանոնավոր համապատասխանություններ: Եթե Marjorie Housepian Dobkin-ի գիրքն ինձ ամբողջական գաղափար տվեց Զմյուռնիայի հարցի պատմության մասին, ապա Խաչերյանի ապրած օրերի նկարագրությունն ինձ տեղադրեց իրադարձությունների դաշտ: Վերջիններս ինձ այնքան իրական թվացին, կարծես թե ես էի դրանք ապրողը: Բոլոր նրանց համար, ովքեր ուզում են իսկապես հասկանալ Զմյուռնիայի աղետի դրդապատճառները, այդ օրերին դաշնակիցների վարքագիծը և մինչ օրս հունական մամուլում չպարզաբանված բազմաթիվ այլ հարցեր, շատ հանձնարարելի է, որ կարդան գոնե այս երկու հայ հեղինակների գրքերը»[17]:

Առանձնահատուկ էր օրագրի գերմաներեն թարգմանության ընդունելությունը: Այն լույս ընծայեց Ավստրիայի «Kitab» հրատարակչությունը 2006 թ. և ապա կրկին՝ 2012 թ.: Գիրքն անմիջապես տարածվեց գերմանախոս երկրներում: Իրար հաջոր-

---

14 *Արքեպիսկոպոս Յակովոս* (Archbishop Iakovos), Ամերիկայի հյուսիսային և հարավային թեմերի առաջնորդ: Հատված 2001 թ. դեկտեմբերի 1-ին ինձ առաքած նամակից: Թարգմանությունը՝ հունարենից:

15 *Իոաննիս Խասիոտիս* (Ioannis Hassiotis), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանի պրոֆեսոր: Հատված 2002 թ. մարտ 23-ին ինձ առաքած էլեկտրոնային նամակից: Թարգմանությունը՝ հունարենից:

16 *Յուստինի Ֆրանգուլի* (Ιουστίνη Φραγγούλη), Մոնրեալում հայտնի հույն լրագրող: Հատված Կանադայում լույս տեսնող «Տախիդրոմոս» (Նամակաբեր) հունարեն ամսագրում տպագրված գրախոսականից, հոկտ. 25, 2001: Թարգմանությունը՝ հունարենից:

17 *Թեդ Վիտաս* (Ted Vittas), Ամերիկայի հելլենական կրթական առաջադեմ ընկերության՝ AHEPA-ի (American Hellenic Educational Progressive Association) նախագահ: Հատված 2002 թ. ապրիլի 7-ին էլեկտրոնային փոստով AHEPA-ի անդամներին ուղղած նամակից: Թարգմանությունը՝ անգլերենից: Տե՛ս Ted Vittas-ի ամբողջ նամակի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի տե՛ս Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 175-177:

դեցին օրագրի մասին դրական գրախոսականները, ինչպես նաև գրքից արտատպված հատվածների հրապարակումները գերմանագիր մամուլում: Ինձ համար ամենաուրախալին այն փաստն է, որ Կարապետ Խաչերյանի անունն ու նրա կենսագրությունն անմիջապես տեղադրվեցին «BBKL»-ում, այսինքն՝ «Bautz»-ի գերմանական կենսամատենագիտական հանրագիտարանում, որն ընդգրկում է եկեղեցու պատմության, փիլիսոփայության և գրականության հետ առնչվող հանրահայտ անձանց կենսագրությունները[18]:

Դժվար է մեկ հոդվածում անդրադառնալ գերմանագիր պատմաբանների ու գիտնականների բոլոր հրապարակումներին: 2006 թ. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի գերմաներեն տարբերակի մասին ամենածավալուն հոդվածը՝ 20 էջից բաղկացած մի գրքույկ, փաստորեն գրել է գերմանացի հայտնի հասարակագետ և հոգեբան, ինչպես նաև ցեղասպանագետ, դոկտոր, պրոֆեսոր Ռիխարդ Ալբրեխտը: Նա ողջունում է այն փաստը, որ Զմյուռնիայի ողջակիզմանը նվիրված երեք հիմնական գրքերն այժմ լրացվել են պատմագրական շատ կարևոր նշանակություն ունեցող՝ բժիշկ Խաչերյանի օրագրով[19]:

Քրիստինա Լանգգարտներ. «Որպես ականատեսի ժամանակագրություն՝ Կարապետ Խաչերյանի օրագիրը կարևոր փաստաթուղթ է, վկայություն, որ Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները հայերի հնարած պատմությունները չեն: Օրագիրը հայոց պատմության համար մեծ ներդրում է: Իր անհողդողդ փաստականությամբ այս օրագիրը անցյալը փաստագրող կարևոր ազդակ է»[20]:

Ռոբերտ Շեդիվի. «Ահա մի գիրք, որն այսօր էլ այժմեական է և խիստ քաղաքական. ականատեսի վկայությունն է հայ բժշկի, որը 1922-ին՝ հույն-թրքական պատերազմի ավարտին, վերապրել է Զմյուռնիայի գրավման և նրա քրիստոնյա բնակչության ոչնչացման ու արտաքսման ողբերգությունը: Խմբագիրը և թարգմանիչը նրա թոռնուհին է՝ գերմանագետ Դորա Սաքայանը, որի կյանքի ուղին Սելանիկից, Երևանից և Մոսկվայից հասել է Մոնրեալի ՄակԳիլ համալսարան, և որն իր պապի տպավորիչ կերպարին հիշատակի հուզիչ խոսքեր է նվիրաբերում: ....Կարապետ Խաչերյանը՝ 1922 թ. սեպտեմբերի 8-ի հունական զորքերի անկարգ դուրսբերումից հետո զանգվածային սպանությունների և քրիստոնեական թաղամասերի հրկիզման ականատեսը, հանդես է գալիս որպես անաչառ դիտորդ, որը հաղորդում է նաև «այրվող հողի» տակտիկայի մասին, որ արևմտյան Անատոլիայում կիրառում էին նահանջող հույները»[21]:

---

18 BBKL – Biographisch-Bibliographisches Kirchenlexikon, Band XXVII, 2006 [Կենսամատենագիտական եկեղեցական բառարան, հատոր XXVII, 2006] http://www.bautz.de/bbkl, դիտվել է՝ 15.02.2023:

19 *Ռիխարդ Ալբրեխտ* (Richard Albrecht), «Dies hätte nie geschehen dürfen». Das Smyrna Tagebuch von Garabed Hatcherian [«Դա երբեք չպետք է տեղի ունենար». Զմյուռնիայի մասին Կարապետ Խաչերյանի օրագիրը] (München, GRIN Verlag, 2006), https://www.grin.com/document/110255, դիտվել է՝ 15.02.2023:

20 *Քրիստինա Լանգգարտներ* (Christina Langgartner), ավստրիացի իրավաբան-պատմաբան: Հատված Կ. Խաչերյանի օրագրի մասին գրախոսականից: Տե՛ս «Ավստրիական պատմության ինստիտուտի հաղորդումներ», հատոր 116, պրակ 1–2, 207–208:

21 *Ռոբերտ Շեդիվի* (Robert Schediwy), պրոֆեսոր, հասարակագետ և հրապարակախոս: Հատված

Հանս Զաութեր. «Օրագրի տեքստը, որն առաջին անգամ է այստեղ հրատարակվում գերմաներենով, արծարծում է հարցեր, որոնք պատմությունից դասեր քաղելու առումով 80 տարի անց էլ արդիական են: Այսպես՝

– մեծ տերությունների դերը հակամարտությունների ժամանակ.
– լրատվական միջոցների վերաբերմունքն ու ազդեցությունը.
– փոքրամասնությունների պաշտպանությունը.
– կրոնի դերն ու գնահատումը.
– հարգանք մշակութային և սոցիալական արժեքների նկատմամբ.
– վերաբերմունք մերձավորների նկատմամբ»[22]:

***

Բայց մի՞թե փաստաթղթային իր բնույթով էլ սպառվում է Կարապետ Խաչերյանի օրագրի արժեքը: Ո՛չ, ամենևին: Գիտենք, որ շատ գրախոսողներ նկատել են նաև գրող Խաչերյանի խոսքի գեղարվեստական արտահայտչականությունը, բառերի և դարձվածքների ճիշտ ընտրությունը, նրա զուսպ, բայց և այնքան ազդեցիկ տոնը, որ «հափշտակում է ընթերցողին ու գամում նրան իր տեղում մինչև ընթերցումը վերջացնելը»[23]:

ՄակԳիլ համալսարանի իմ գործընկերներից պրոֆեսոր Սոլոմոն Լիպը օրագրի ընթերցումից հետո ինձ ուղղած իր շնորհակալական նամակում զուգահեռներ է անցկացնում Կարապետ Խաչերյանի օրագրի և ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի հանրածանոթ ստեղծագործության միջև. «Կարդացի Ձեր *An Armenian Doctor in Turkey* հրաշալի գիրքը և տարվեցի նրա մանրամասներով ու ամբողջականությամբ: Ընթերցանությունը որքան գրավիչ, այնքան էլ սրտահույզ էր, և մտաբերեցի մի գիրք, որը կարդացել եմ մի քանի տասնամյակ առաջ: Դա Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գիրքն է»[24]: Ի դեպ, կան և այլ ընթերցողներ, որոնք Կարապետ Խաչերյանի օրագիրը համեմատել են Ֆրանց Վերֆելի գլուխգործոցի հետ:

Ուշագրավ է Քյոլնի համալսարանի նորագույն պատմության դոկտոր, պրոֆեսոր Սաբինե Մանգոլդի՝ 2007 թ. մտքի թռիչքը, երբ նա գրում է. «Ինչպես հնում Այնեասը (Αἰνείας) իր հոր հետ այրվող Տրոյայից, այնպես էլ Կարապետ Խաչերյանը փախչում էր Մուստաֆա Քեմալի ազգայնամոլ ջոկատների կողմից զավթված Զմյուռնիայից՝ դուստրերից մեկին գրկած: Դա հալածյալ գաղթականի կատարյալ տիպարն է, որ գրականության մեջ այս անգամ ներկայանում է հայ բժշկի կերպարով, որը փախչում

գրախոսականից, որը լույս է տեսել 2006 թ. «Bücherschau»-ում («Bücherschau»-ն լրատվամիջոցների ու գրադարանների համար գրախոսականների գերմանական կայքէջ է) https://www.muenchner-buecherschau.de/, դիտվել է՝ 15.02.2023:

22 *Հանս Զաութեր* (Hanns Sauter), պատմաբան, գրախոս. հատված գրախոսականից BN-ում (Online-Bibliotheksnachrichten) [Առցանց գրադարանային նորություններ], 2006, https://www.biblio.at/literatur/bn/bnonline.html, դիտվել է՝ 18.02.2023:

23 Ted Vittas, ibidem.

24 *Սոլոմոն Լիփ* (Solomon Lipp), 1998 թ. հոկտ. 30-ին փոստով առաքված նամակից: Թարգմանությունը՝ անգլերենից:

է, մինչև նրան հաջողվում է հասնել ամերիկյան նավ և Թուրքիայից հեռանալ երբեք այլևս չվերադառնալու որոշումով»[25]:

Հայ գրողների տանը 2005 թ. ապրիլի 27-ի շնորհանդեսի ժամանակ է, որ Կարապետ Խաչերյանի օրագիրը կարծես իր հարազատ միջավայրում էր քննարկվում: Ներկաները միաբերան նշեցին գրվածքի գրական արժանիքները: Ահա այդ արժևորման ամփոփումը՝ հրապարակախոս և լրագրող Մարգո Ղուկասյանի խոսքերով. «Իր այս առանձնահատուկ օրագրով բժիշկ Խաչերյանն իրեն որոշակիորեն հաստատել է որպես լիիրավ գրող»:

Այս բոլորով հանդերձ՝ օրագրի գրական արժեքը դեռևս երբեք չի քննարկվել, ոչ էլ վերլուծվել են նրա գրվածքի այն հատվածները, որոնք, ինչպես շեշտեց վերոհիշյալ շնորհանդեսի բացման խոսքում ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանը, «կարդացվում են որպես արվեստի գործ»[26]:

Վերջերս նպատակադրված ձևով ես մեկ անգամ ևս սուզվեցի մեծ հորս օրագրի մեջ և մեկ անգամ ևս համոզվեցի, որ դա զարմանահրաշ մի գրություն է, քանի որ իր մեջ պարփակում է գրական թաքնված գանձեր: Եվ ահա թե ինչ գտա առաջին իսկ էջի վրա՝ առաջին իսկ պարբերության մեջ, որը, ինչպես ամեն նոր օրվա նկարագրություն, սկսվում է տվյալ օրվա, ամսաթվի և երբեմն էլ նույնիսկ տարեթվի նշումով: Այստեղ կարդում ենք՝ 1922, օգոստոսի 28, երկուշաբթի: Ի հակադրություն օրագրի մնացած էջերի, մեր աչքի առաջ մի պահ կարծես վարդագույն երանգներով մի շատ լավատեսական պատկեր է բացվում: Գործողության վայրը Զմյուռնիան է, որտեղ բժիշկ Խաչերյանը գոհունակությամբ է ամփոփում վերջին երեք տարում իր ձեռք բերած հաջողությունները Զմյուռնիայի հայոց հիվանդանոցում և քաղաքի հայկական համայնքում: Իր տիկնոջ՝ Էլիզայի, և իրենց մեկուկես տարեկան աղջկա՝ Վարդուհու հետ բժիշկ Խաչերյանը գտնվում է Զմյուռնիայի Չալկըճը Բաշը փողոցի իրենց ընդարձակ և հանգստավետ տան մեջ: Նրանք ուրախ են ու երջանիկ: Նրանց մյուս չորս զավակները՝ Խաչերեսը (13 տ.), Սիրարփին (11 տ.), այսինքն՝ մայրս, Գրիգորը (9 տ.) և Հովհաննեսը (7 տ.), իրենց հետ չեն, քանի որ նրանք, ինչպես ամեն ամառ, իրենց դպրոցական արձակուրդն անցկացնում են Զմյուռնիայից մոտ 80 կմ հյուսիս-արևելքում գտնվող Ակ-Հիսար կոչվող գյուղաքաղաքում: Այնտեղ՝ իրենց կալվածքում է բնակվում նրանց մայրական կողմի՝ Կոստանյանների բարեկեցիկ գերդաստանը, որը մեծ եկամուտներ է ստանում ձիթապտղի, թզի չրի ու չամչի արտադրությունից:

Եվ ահա այդ նույն օրագրի առաջին էջում, կարծես հատուկ դիտավորությամբ՝ որպես շարունակությունը իր չորս երեխաների անունների, մեծ հայրս թվարկում է անունները սիրելիների մի այլ խմբի: Դրանք Կոստանյան և Խաչերյան ընտանիքների անդամներն են՝ իր երեխաների մայրական և հայրական տատիկներն ու նրանց հարազատները: Կոստանյանները ակհիսարցի բնիկներ են, Խաչերյանները՝ պարտիզակցի եկվորներ: Ընթերցողը դեռ չգիտի, որ շուտով Ակ-Հիսարում գտնվող և՛

---

25 *Սաբինե Մանգոլդ* (Sabine Mangold), պրոֆեսոր, պատմաբան. հատված նրա գրախոսականից, *Das Historisch-politische Buch, 55, 2007, 25* [Պատմաքաղաքական գիրք, հատոր 55, 2007, 25]:

26 Լևոն Անանյան, ՀԳՄ նախագահ (2001–2011):

Կոստանյաններից, և՛ Խաչերյաններից տասը հարազատները պիտի նահատակվեն Ակ-Հիսար ներխուժող թուրք բանակի և տեղական ամբոխի կողմից: Օրագիրը գրելիս մեծհայրս դա գիտի, և ես ուզում եմ հավատալ, որ նա այստեղ որոշում է առանց բառերի ստեղծաբանել՝ կատարելով մի սրբազան պարտականություն: Օրը 1922 թ. օգոստոսի 28-ն է՝ Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնի երկուշաբթի օրը և, ինչպես հայտնի է, Հայ եկեղեցու տաղավար հինգ մեծ տոներին հաջորդող երկուշաբթի օրերը ննջեցյալների հիշատակին նվիրված օրեր են, այսինքն՝ մեռելոց օրեր: Եվ ասես որպես հոգեհանգստյան աղոթք, «Տէր, ողորմեա՛» կամ «Ռեքվիեմ», օրագրի հենց սկզբում մեծ հայրս մեկ առ մեկ հիշատակում է մեր ընտանիքի նահատակների անունները՝ նշելով իր ազգակցական կապը նրանց հետ: Եվ կարծես այստեղ մեծ հայրս ընթերցողին ևս կոչ է անում աղոթել նրա հետ զոհվածների հոգիների համար: Հնչում են մեկ առ մեկ զոհված Խաչերյանների անունները. *մայրս՝ Վարդենի, եղբայրս՝ Նշան, իր կինը՝ Արմենուհի, և որդին՝ Հովհաննես*: Հետո լսվում են իր կնոջ հարազատներից՝ Կոստանյան ընտանիքից նահատակվածների անունները. *զոքանչս՝ Զարուհի Կոստանյան, իր քույրը՝ Գյուլիզար, զոքանչի երկու որդիներից Հակոբը, նրա կինը և զավակները*[27]: Սրանք, ավա՛ղ, այն տասը սիրելիներն են, որ ուշացել են և չեն կարողացել խուսափել թուրքի սրից: Այստեղ մի անգամ ևս անհրաժեշտ եմ համարում հիշատակել, որ մեծ հորս անմիջական հարազատները՝ այդ օրերին Ակ-Հիսարում գտնվող Խաչերյանները՝ մայրը, եղբայրը, եղբոր կինն ու նրանց որդին, Ակ-Հիսարի բնիկները չէին: Նրանք միայն չորս ամիս առաջ էին փրկվել իրենց ծննդավայր Պարտիզակում տեղի ունեցած ջարդերից և ապաստանել իրենց խնամիների՝ Ակ-Հիսարի կալվածքում: Արժե հիշատակել, որ Պարտիզակից մազապուրծ եղած այդ ընտանիքի ողբերգական վախճանն Ակ-Հիսարում հաստատում է հայերի այն համոզմունքը, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում իրենց համար երբևէ թուրքի յաթաղանից փրկություն չկար:

Օրագրի առաջին պատկերը եզրափակվում է տագնապալի իրազեկությամբ. «Երեկոյան շշուկներ են տարածվում, թե թուրքերը հարձակում են գործել Աֆիոն Գարահիսարի ճակատում և փոքր հաջողության հասել»: Այդ պահից սկսվում են աղետալի օրերը Կարապետ Խաչերյանի ընտանիքի և ամբողջ հայ ու հույն բնակչության համար, որն իրեն ի վերջո գտնում է անելանելի վիճակում՝ «հրի, սրի և ջրի միջև»:

Օգոստոսի վերջին երկու-երեք օրերը շատ տագնապալից են, իսկ սեպտեմբերի 1-ին քաղաքը խուճապի է մատնված: Բոլոր շրջապատող վայրերից փախչող գաղթականները անանցանելի են դարձրել փողոցները: Բժիշկ Կարապետ Խաչերյանը խիստ մտահոգված է, բայց ընթերցողը միայն տողերի արանքում է ընկալում իր մտատանջությունը:

Հարց է ծագում. ինչո՞ւ է բժիշկ Խաչերյանն իր օրագրի առաջին էջում համատեղ թվարկում Ակ-Հիսարի իր բոլոր սիրելիների՝ թե՛ փրկված իր չորս զավակների և

27 Կոստանյանների ավագ որդին՝ Կոստանը և նրա կինը կարողանում են ժամանակին Ակ-Հիսարից փախուստ տալ: Դրա մասին տե՛ս հոդվածի շարունակությունը:

թե՛ տասը զոհված հարազատների անունները: Ես վստահ եմ, որ դա Կարապետ Խաչերյանի գրական հնարքներից է: Ես դրանում համոզվեցի, երբ օրագրի սեպտեմբերի 1-ի գրառման մեջ կարդացի նրա մտահոգությունը քեմալականների առաջխաղացման մասին. «Տունին մեջ մենք ալ անհանգիստ եղած ենք և կը խորհինք միջոց մը գտնել մերինները ժամ առաջ մեր մոտ բերելու համար»[28]:

Որոշակի չէ, թե ովքեր են «մերինները»: Համոզված եմ սակայն, որ նա նկատի ունի բոլոր հարազատներին՝ և՛ իր չորս զավակներին, և՛ մնացած տասին, որոնք այդ ժամանակ Ակ-Հիսարում էին: Նա թողնում է ընթերցողին կռահելու, թե իր չորս զավակները նույնպես որքան մոտ են եղել ոչնչացման վտանգին:

Վերջապես սեպտեմբերի 2-ի գրառման մեջ կարդում ենք. «Իրիկունը կայարան կ'երթամ, հրապարակը լեցուած է վիրաւոր զինուորներու ինքնաշարժերով.... Սօմայի կառախումբը կը հասնի եւ մեծ ուրախութեամբ կը տեսնեմ զաւակներուս վերադարձը ընկերակցութեամբ Կոստանի և իր կնոջ Մարիի: Աճապարանքով տուն կ'երթանք»[29]: Մենք հետո տեղեկանում ենք, որ դա Ակ-Հիսարից Զմյուռնիա մեկնող վերջին գնացքներից էր:

Եթե երեխաների ավագ քեռի Կոստանն այդ օրը չմեկներ և իր նախաձեռնությամբ մեծհորս չորս երեխաներին էլ ինքնագլուխ Զմյուռնիա չտեղափոխեր, բժիշկ Խաչերյանը տասը զոհված հարազատների հետ պիտի կորցներ նաև իր երեխաներին: Այսինքն՝ մայրս և իր երեք եղբայրները հրաշքով են ազատվել թրքական ջարդերից:

Շատ են օրագրում հատվածները, որոնք ուշադրություն են գրավում իրենց հուզիչ նկարագրություններով, տրամաբանական հանգույցներով և դրանց գեղագիտական լուծումներով: Անդրադառնանք մեկ այլ շատ հուզիչ ու ցնցող հատվածի:

Քանի՞ մարդ այս աշխարհում կարող է ասել, որ ականա վկա է դարձել մանկամարդ կնոջ բռնաբարության՝ որպես ունկնդրող: Եվ եթե նույնիսկ նման մարդիկ լինեին, ո՞վ պիտի կարողանար մեկ էջի կամ մեկ պարբերության մեջ կատարյալ պատկերավորությամբ նկարագրել լսածը՝ այն էլ նման զսպվածությամբ, ինչպես բժիշկ Խաչերյանը: Ո՞ւմ պիտի հաջողվեր գտնել բառերն ու արտահայտչական միջոցները այդպես սրտահույզ ձևով ներկայացնելու դեռատի կնոջ ողբերգությունը, որը լլկվում է շուրջ տասներկու «թուրք բորենիներու կողմէ»՝ այն էլ մոր կամ սկեսրոջ և երեքից չորս տարեկան մանկան ներկայությամբ[30]:

---

28 Տօքթ. Կարապետ Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս 1922-ին*, 3:

29 Նույն տեղում, 3-4:

30 «Կէս գիշերէն ետք, երբ մտածումներուս մէջ թաղուած էի, ուշադրութիւնս կը գրաւէ կնոջական ձայն մը աղերսական, որ վարի յարկէն կը լսուի: Ատոր կը խառնուի թուրք զինուորի մը ձայնը սպառնալից, յետոյ 3-4 տարեկան մանուկի մը ճիչը լալագին: Կինը՝ որու ձայնէն կը հասկցուի մանկամարդ կին մ'ըլլալը, կը խնդրէ զինուորէն, որ իր պատիւին խնայէ: Իսկ զինուորը սպառնագին կը հրամայէ, որ յանձնուի առանց ձայնի: Պզտիկը կը ճչէ: Կինը կը պաղատի, թուրքը անողոք կը մնայ: Կը լսուի նաև ձայնը տարիքոտ կնոջ մը, որ թուրքին գութը կ'ուզէ շարժել «պատիւը փատիշահինն է» ըսելով: Թուրքը պառաւին կը հրամայէ որ լռէ, եթէ չ'ուզեր անմիջապէս դիակի վերածուիլ: Պառաւը կը լռէ: Մանուկը կը շարունակէ լալ: Թուրքը կը սպառնայ, եւ իր գազանային նպատակին հասած է արդէն, որչափ որ կարելի է հասկնալ քանի մը վայրկեան տեւող լռութենէն: Ասոր կը հաջորդէ ցաւատանջ հառաչանք մը ու աղերսական աղաղակ մը, որ կը գոչէ «բաւակա՞ն է այլեւս...»: Լլկուած կնոջ

Բժիշկ Խաչերյանն այստեղ ընտրել է թատրոնի բառապաշարը, նկարագրելու համար ահավոր ողբերգության սրտաճմլիկ դրվագները: Եվ վարագույրը բարձրանում ու իջնում է ամեն անգամ, երբ մի նոր թուրք զինվոր է «բեմ» խուժում ու գնում թշվառ որսի մոտ՝ իր գազանային կիրքը բավարարելու: Գրության հեղինակի հենարանն այստեղ բառամիջոցների տիրապետումն է, ինչպես նաև նրա հիանալի կարողությունը՝ իմաստավորելու փոփոխվող ձայների ու լռության հաջորդականությունը: Նա «շունչը բռնած» լսում է և ընթերցողին էլ պարզորոշ լսել է տալիս «կնոջական ձայնն աղերսական», «թուրք զինուորի մը ձայնը սպառնալից», «3–4 տարեկան մանուկի մը ճիչը լալագին», «ձայնը տարիքոտ կնոջ մը, որ թուրքին գութը կ'ուզէ շարժել»:

Այդ գարշելի իրականության մեջ լռությունն էլ է իմաստավորվում: Եվ կարդում ենք. *«Թուրքը.... իր գազանային նպատակին հասած է արդէն, որչափ որ կարելի է հասկնալ քանի մը վայրկեան տեւող լռութենէն»:*

Հեղինակը սիրում է հակիրճությունը և վարպետորեն օգտագործում է մեծաքանչ հայոց լեզուն: Եվ երբ երկրորդ թուրք զինվորն է հայտնվում, ու պատկերը կրկնվում է, նա դիմում է լեզվական միջոցների ավելի խնայողական օգտագործման: Նկարագրական նախադասություններն այստեղ փոխարինվում են բայական գոյականներով կամ անվանական նախադասություններով: Այսպես. «Ողբերգական ներկայացումի մը վարագոյրը կը կրկնուի նոյնութեամբ. *կնոջական պաղատանք, սպառնական աղաղակ, մանկական ճիչեր, ցաւագին հեծկլտուքներ, պառաւական միջամտութեան անօգուտ փորձեր*»:

Եվ այսպես շարունակ, լսվում են նորանոր թուրք զինվորների ձայներ «*մինչեւ արշալոյսի ծագումը, երբ կնոջ մարտիրոսութիւնը վերջ կը գտնէ*»: Աստիճանաբար նվազում են նկարագրությունները, և հեղինակը հետևում է «Less is more» (Նվազը առավել է) մինիմալիստական կարգախոսին: Բայց ընթերցողի ականջն էլ արդեն զգայնացած է և դյուրությամբ է հանգում իր եզրակացություններին:

Ուշագրավ է նաև վերոհիշյալ պարբերության հմուտ եզրափակումը, երբ «կը լսեմ» ներածականը փոխարինվում է «կը տեսնեմ»-ով: Այստեղ Խաչերյանն արդեն դեպքերի իրական ականատեսն է: Տեսնելու համար այն, ինչ տեսել է բժիշկ Խաչերյանը, բավական է կարդալ այդ սրտաճմլիկ պարբերության վերջին չորս տողը:

Այս օրագիրն անշուշտ դեռևս կարոտ է գրականագիտական ուսումնասիրության՝ նրա գեղարվեստական կատարելությունը բացահայտելու նպատակով:

լալագին աղաչանքն ու մանուկին սուր ճիչերն անզոր են թուրքին գազանային բնազդը մեղմացնելու: Ան իր ճանկերուն մէջ առած, պէտք է յագուրդ տայ իր մոլեգին զգացումներուն: Շունչս բռնած՝ կը հետեւիմ տխուր ողբերգութեան մը յուզումնալից դրուագներուն, որոնց կը յաջորդէ խոր լռութիւն մը... Քառորդ մը հազիւ անցած է, երբ կը լսեմ ուրիշ թուրքի մը ձայնը թշուառ որսին քովէն: Ողբերգական ներկայացումի մը վարագոյրը կը կրկնուի նոյնութեամբ. կնոջական պաղատանք, սպառնական աղաղակ, մանկական ճիչեր, ցաւագին հեծկլտուքներ, պառաւական միջամտութեան անօգուտ փորձեր: Քիչ յետոյ երրորդ զինուորի մը ձայնը, եւ այսպէս շարունակ մինչեւ արշալոյսի ծագումը, երբ կնոջ մարտիրոսութիւնը վերջ կը գտնէ: Առաւօտ է, պահակ զինուորին հրամանով վար կ'իջնեմ բնական պէտքի համար եւ կը տեսնեմ վարի յարկը քարերուն վրայ նստած մանկամարդ կին մը եւ պառաւ մը 3–4 տարեկան մանուկ մը գրկած: Պառաւը՝ որ այդ դժբախտ երիտասարդուհիին մայրը կամ կեսուրն է, հանդիսատեսը կ'ըլլայ իր աղջկան կամ հարսին լկտումին երկոտասնեակ մը թուրք բորենիներու կողմէ»: Տե՛ս Sopp. Կարապետ Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս 1922-ին*, 31-32:

DOCUMENT OR LITERARY WORK? KARAPET HATCHERIAN'S DIARY ABOUT THE SMYRNA DISASTER
(Reflections on Reviews and Literary Values of the Diary)

Dora G. Sakayan
McGill University, Canada

SUMMARY

The author of the article, who is the discoverer, publisher and distributor of Doctor Karapet Hatcherian's diary about the Smyrna disaster, revisits one more time this valuable writing. She first renders an account about the journey the diary has made since it passed into her hands 30 years ago. After being published twice in Armenian (in its Western Armenian original and in Eastern Armenian), the diary has been presented to the world in seven foreign languages, becoming known in the Armenian Genocide literature as one of the most translated works. Depending on the language, book presentations have been organized in different countries of the world where the book has had always a positive reception.

The article quotes opinions about Doctor Karapet Hatcherian's diary from expert reviews, letters and speeches. Among them, the exceptional value of the diary as a historical document and primary source of information is stressed. The literary value of the diary has been also often indicated, but the writing has never been analyzed from that point of view. Such an experiment is performed here for the first time by the author of the present article, who based on the analysis of two passages from the diary, highlights writer Karapet Hatcherian's special artistic ability to apply various literary techniques of expressiveness, as well as to masterfully use the rich vocabulary and idioms of Armenian language.

Key words: diary, original, manuscript, translation, document, primary source, literary work, literary analysis.

ДОКУМЕНТ ИЛИ ЛИТЕРАТУРНОЕ ПРОИЗВЕДЕНИЕ? ДНЕВНИК ДОКТОРА КАРАПЕТА ХАЧЕРЯНА О КАТАСТРОФЕ В СМИРНЕ
(размышления об отзывах и о литературных ценностях дневника)

РЕЗЮМЕ

Дора Г. Сакаян
Университет МакГилла, Канада

Автор статьи, которая является первооткрывателем, издателем и распространителем дневника доктора Карапета Хачеряна о катастрофе в Смирне, по-новому пересматривает это ценное произведение. Сначала она указывает на путь, пройденный дневником с тех

пор, как он попал ей в руки 30 лет назад. Изданный дважды на армянском языке (на западноармянском оригинале и на восточноармянском варианте языка), дневник был переведен и представлен миру на семи иностранных языках, чем он в литературе, посвященной истории Геноцида армян, стал известен как одно из наиболее часто переведенных произведений. В зависимости от языка, презентации книг были организованы в разных странах мира, где дневник был всегда встречен с большим энтузиазмом.

В статье приводятся мнения о дневнике доктора Карапета Хачеряна из экспертных обзоров, писем и выступлений. В них подчеркивается исключительная ценность дневника как исторического документа и первоисточника. Нередко указывается и литературная ценность работы, но с этой точки зрения дневник никогда не подвергался анализу. Подобный эксперимент впервые проводится в настоящей статье, где на основе анализа двух отрывков из дневника автор статьи указывает на особое художественное умение писателя Карапета Хачеряна применять литературные приемы выразительности, а также умело использовать богатый словарный запас и идиомы армянского языка.

REFERENCES

Makaryan, Asatur. *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու* [Memory Book of the Armenian Colonies of Thrace and Macedonia]. Selanik: Horizon, 1929;

Mkhalean, Grigor. *Պարտիզակն ու պարտիզակցին* [Partizak and partizakts'i]. Cairo: Sahak-Mesrop, 1938;

Ter-Hakobean, Hakob. *Պարտիզակը խատուտիկ* [Partizak Dandelion]. Paris: Ter-Hakobean Hakob, 1960;

Տօքթ. Կարապետ Խաչերեանի օրագիրը՝ *Զմյուռնիական արկածներս 1922-ին* [Doctor Hatcherian's Diary. My Smyrna Ordeal of 1922]. Montreal, 1995.

Հեղինակի մասին
About the author
Об авторе

Դորա Գ. Սաքայան, բանասիրական գիտությունների թեկնածու, լեզվաբան, գերմանագետ, հայագետ, ՄաքԳիլ համալսարանի թոշակառու պրոֆեսոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր:

Ուսումնասիրությունների ոլորտը՝ զուգադրական լեզվաբանություն, օտար լեզուների դասավանդում, թարգմանության տեսություն:

Էլ. փոստի հասցե՝ Dora.sakayan@mcgill.ca

Dora G. Sakayan, PhD in Philology, linguist, Germanologist, Armenologist, retired professor of McGill University, honorary professor of Yerevan State University.

Research fields – comparative linguistics, teaching foreign languages, translation theory.

E-mail: Dora.sakayan@mcgill.ca

Дора Г. Сакаян, кандидат филологических наук, лингвист, германолог, арменовед, профессор Университета МакГилла на пенсии, почетный профессор Ереванского государственного университета.

Область исследований – сравнительное языкознание, преподавание иностранных языков, теория перевода.

Эл. почта: Dora.sakayan@mcgill.ca